ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Արջուտ, 093 19 91 34 arjutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 49-Ա

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արջուտ համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 12-ի նիստի օրակարգը՝

1.Արջուտ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի օտարման մասին:

2.Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

3.ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱՉԳԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Արջուտ, 093 19 91 34 arjutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 50-Ա

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արջուտի համայնքապետարանը դիմել է վարձակալին և ստացել համաձայնություն վարձակալված հողամասի օտարման վերաբերյալ, որպեսզի համալրվի 2021 թվականի սուբվենցիոն ծրագրի բյուջեն, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի ՀԱնրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետով, 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 60-րդ, 64-րդ, 66-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 627-րդ հոդվածով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 12,07,2001թ թիվ 286 որոշման գ կետով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Վարձակալությամբ տրամադրված՝ համայնքային սեփականություն հանդիսացող 06-019-0107-0369 ծածկագրի 2,63321 հա գյուղ նշանակության հողամասը օտարել ուղիղ վաճառքով՝ 1916000 /մեկ միլիոն ինը հարյուր տասնվեց հազար/ դրամ արժեքով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱՉԳԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱՄԵՆԻԿ

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Արջուտ, 093 19 91 34 arjutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 51-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>>14,06,2021 թվականի թիվ 144 դրական եզրակացությունը՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

1.Լոռու մարզի Արջուտ համայնքի վարչական տարածքում գտնվող, Մովսես Ղարագյոզյանի սեփականություն հանդիսացող 0,05122 հա /կադաստրային ծածկագիր՝ 06-019-0110-0001/ գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողամասը փոխադրել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

2.Պարտավորեցնել Մովսես Ղարագյոզյանին համայնքային բյուջե վճարել հողամասի ներկա պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը:

3.Առաջարկել համայնքի ղեկավարին ապահովել իրավունքների պետական գրանցումը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում և համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԴԱՎԼԱԲՅԱՆ ՎԱՀԳԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Արջուտ, 093 19 91 34 arjutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 52-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Արջուտի համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Արջուտ համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 07-ի <<ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱՉԳԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ**